«ԿԱՊԱՆԻ ԹԻՎ 2 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ «ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴԵՐԸ ԱՆԳԼԵՐԵՆԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ»

Առարկա՝ «Անգլերեն լեզու»

Հեղինակ՝ Սարուխանյան Արմինե Անդրանիկի

Ուսումնական հաստատություն՝ «Վարդավանքի միջն. դպրոց»

Ղեկավար՝ Թագուհի Ղոնյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բովանդակություն.....2

Ներածություն.....3

Գլուխ.1 «ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴԵՐԸ ԱՆԳԼԵՐԵՆԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ»

1.1 Համագործակցային ուսուցման ազդեցությունը անգլերենի դասին սովորողների խոսքային կարողությունների զարգացման վրա.....5

1.2 Դասավանդման մեր փորձից.....13

Եզրակացություն.....17

Օգտագործված գրականության ցանկ.....19

Հավելվածներ.....20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կրթական համակարգում բարեփոխումները պայմանավորված են կրթության որակի բարձրացմամբ և սովորողների հետաքրքրությունն ու մոտիվացիան դեպի դասն ուղղորդելու նախապայմաններով: Այս համատեքստում կարևոր եմ համարում ուսումնական գործընթացում սովորողների դերակատարության ու մասնակցության վերարժևորումը: Հաշվի առնելով ժամանակաշրջանի մարտահրավերները՝ կարող ենք փաստել որ սովորողների լայն շրջանակներում նկատվում է աշխատունակության ցածր մակարդակ, որի հիմնական պատճառներից մեկը դասի ժամանակ վերջիններիս հետաքրքրությունների ու ցանկությունների անհամաձայնությունն է: Սովորողները համացանցային հարթակներում ստանում են զանազան տեղեկատվություն, և ուսումնական գործընթացի ընթացքում ստացած գիտելիքները այլևս չեն համապատասխանում վերջիններիս պահանջմունքներին: Այստեղից կարող ենք եզրահանգել, որ սովորողն ինքն է հաճախ պահանջում, որ ուսուցիչը վերանայի դասավանդման իր մոտեցումները, դասը հագեցնի այնպիսի բաղադրիչներով, որ հետաքրքիր լինի, ինչն էլ ենթադրում է , որ սովորողն այդ պարագայում կդառնա դասապրոցեսի կենտրոնական սուբյեկտը, ավելի շատ կխոսի, կգործի, կմասնակցի դասին: Կարծում ենք, որ այս պարագայում կառուցողական ու արդյունավետ դասի նախապայմաններից է համագործակցային ուսուցումը, որը ուղեկցվում է սովորողի անմիջական մասնակցայնությամբ, դասընկերների և ուսուցչի հետ ուղիղ համագործակցությամբ:

Սովորողների մասնակցությունը կրթական գործընթացին ենթադրում է, որ վերջիններս կդառնան գործընթացի գործընկերային կողմ, կունենան իրենց դերը, ավելի շատ կաշխատեն դասին, կհամագործակցեն, կբանակցեն ընկերների հետ, կկատարեն ինքնուրույն եզրահանգումներ: Ուսուցիչ-սովորող համագործակցությունը թույլ կտա, որ վերջինս լինի ինքնուրույն, նախաձեռնող, անկաշկանդ կարողանա կարծիք հայտնել, իր հետաքրքրությունների մասին խոսել ու բավարարել դրանք հենց դասապրոցեսի ժամանակ: Ուստի կարծում ենք, որ ավանդական դասն իր ողջ մեթոդական համակարգով հարկավոր է վերանայել՝ դասի հիմնական ակտիվ սուբյեկտ դարձնելով հենց սովորողներին:

Անգլերենի ուսուցման շրջանակներումն նույնպես սովորողը պետք է լինի դասապրոցեսի գործընկերային կողմ: Իրականում օտար լեզուն մուտք է գործում սովորողի լեզվամտածողության

մեջ թե' լսելու, թե' խոսելու ու հաղորդակցվելու ճանապարհով: Ուստի ավանդական դասին բազմանդամ դասարաններում խոսքի հնարավորություն տալով մի քանի սովորողի՝ նշանակում է ուսուցիչն ուղղակիորեն «զրկում է» մյուսներին խոսելու ու հաղորդակցվելու հնարավորությունից: Իսկ ահա համագործակցային մեթոդական համակարգի ներդրումը մեծապես կարող է նպաստել սովորողների համընդհանուր մասնակցությանը դասին: Խմբային, համագործակցային աշխատանքների իրականացումը թույլ կտա, որ դասարանում սովորողների մասնակցությունը լինի համաչափ, որևէ սովորող չմնա պարապ: Այս մոտեցումը, կարծում եմ, բավականին արդյունավետ կարող է անդրադառնալ սովորողների աշխատունակության ու առաջադիմության վրա:

Հետազոտության թեմայի արդիականությունը: Հետազոտության արդիականությունը պայմանավորված է դասապրոցեսին և մասնավորապես անգլերենի դասավանդման ընթացքում ուսուցման համագործակցային մեթոդների կիրառման անհրաժեշտությամբ, որից կախված է սովորողների առաջադիմությունն ու համաչափ մասնակցությունը դասին:

Հետազոտության նպատակը:

Ուսումնասիրել անգլերենի դասի ընթացքում ուսուցչի կողմից կիրառվող համագործակցային մեթոդների ազդեցությունը կրթության որակի բարձրացման և դասի ժամանակ սովորողների դերի վերանայման համատեքստում:

Հետազոտության խնդիրը:

- Ցույց տալ համագործակցային մեթոդական համակարգի դերը սովորողների աշխատունակության բարձրացման ու առաջադիմության վրա:
- Կարևորել անգլերենի դասաժամին սովորողների համագործակցությունը միմյանց հետ՝ որպես մի շարք կարողունակությունների զարգացման նախապայման:
- Մատնանշել ուսուցչի նախաձեռնող ու նորարար լինելու հանգամանքը՝ սովորողների առաջադիմության, ինքնուրույնության ու մոտիվացված լինելու տեսանկյունից:

Գլուխ.1 «ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴԵՐԸ ԱՆԳԼԵՐԵՆԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ»

1.1 Համագործակցային ուսուցման ազդեցությունը անգլերենի դասին սովորողների խոսքային կարողությունների զարգացման վրա

Անգլերենի լեզվի դասավանդման հիմնական նպատակը սովորողի կապակցված խոսքի, հաղորդակցական հմտությունների ձևավորումն ու զարգացումն է: Սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ խոսվում է օտար լեզվի դասավանդման մասին՝ պետք է նկատել, որ այս գործընթացը ուսուցչից կպահանջի հավելյալ ջանքերի գործադրում:

Կապակցված խոսքի շնորհիվ է տեղի ունենում սովորողների հոգեկան զարգացումը, սոցիալականացումը, ձևավորվում է նրա ներաշխարհը: Այս առումով բանավոր կապակցված խոսքի տիրապետման համար նպաստավոր պայմաններ է ստեղծում համագործակցային ուսուցումը: Կապակցված խոսքը հանդիսանում է սովորողի խոսքի զարգացման ցուցանիշ. այն իր մեջ ներառում է խոսքի հնչյունային կուլտուրան, քերականական կառուցվածքը, բառապաշարը: Բացի այդ բանավոր խոսքը անհատի մտավոր կարողությունների կարևոր դրսևորումներից, է և դրա զարգացումը տեղի է ունենում մարդու կյանքի ընթացքում և անընդհատ ենթարկվում է մշակման, ուստի այստեղ հետևողական լինելը պարտադիր է: Բանվոր խոսքին տիրապետում են խոսելու միջոցով և կարևոր է, նախապայման է երբ սովորողին իր խոսքի նկատմամբ ներշնչում ենք վստահություն և տալիս հնարավորություն անկաշկանդ խոսելու և արտահայտվելու: Շատ կարևոր է, որ այս ճանապարհին ուսուցիչը ցուցաբերի առավել զգոնություն և, սովորողին բացառապես խրախուսելով, հարթի ճանապարհ դեպի վերջնարդյունք:

Դպրոցականների համար պետք է անընդհատ ապահովել շփման ու հաղորդակցման համար լիարժեք պայմաններ: Պակաս կարևոր չէ չկաշկանդել վերջիններիս ինքնուրույն մտածողությունն ու դրանից բխող ոչ հավաստի ու մտացածին խոսքը, քանի որ ցանկացած միտք պետք է հնչի, որպեսզի կյանքի այդ կարևոր փուլում սովորողը ստանա բոլոր անհայտների պատասխանները: Հարկավոր է թույլ տալ, որ դպրոցականը իր մեջ կուտակված

ֆանտազիաները, պատկերացումներն ու երազանքներն անպայման արտաբերի: Այսպես մենք չենք նվաստացնում նրա կամարտահայտության իրավունքը, ավելին՝ նա ավելի արագ է ինտեգրվում սոցիալական միջավայրին ու գիտակցում իր դերն այդտեղ, առանց վախերի հաղորդակցվում օտար լեզվով:Օտար լեզվով հաղորդակցվելու, տվյալ լեզվի արտահայտչամիջոցներին տիրապետելու ամենաարդյունավետ ձևը բնական հաղորդակցումն է:

Շատ կարևոր է ապահովել բնական հաղորդակցության ձևերի բազմազանությունը սովորողի խոսքի զարգացման գործընթացում: Ինչպես արդեն նշեցինք, դպրոցականին ցանկացած գործունեության ժամանակ անհրաժեշտ է քաջալերել նրա արտահայտվելու ցանկությունը, հնարավորություն տալ ազատ, անկաշկան խոսելու, ինչը արդյունավետ կերպով կարող է նպաստել խոսքային հնարավորությունների ընդլայնմանը: Որքան մեծ է սովորողի արտահայտվելու և խոսելու ցանկությունը, այնքան արագ է մշակվում և հղկվում խոսքը: Անգլերենի դասավանդման ընթացքում կարևոր է նաև սովորողների մոտ ձևավորել լսելու կարողություններ: Քերականորեն ճիշտ կառուցված, ոչ բարդ բառային պաշար պարունակող, ականջահաճո խոսք լսելը կարող է նպաստել օտար լեզվի արտահայտչամիջոցների ընկալմանը: Նմանօրինակ խոսքը կարևորագույն գործիքն է, որը կարելի է ուղղել ի շահ երեխայի:

Հայտնի է, որ օտար լեզուն, որպես ուսումնական առարկա, նպաստում է սովորողների ընդհանուր կրթությանը, զարգացնում նրանց ճանաչողական կարողությունները, խոսքն ու մտածողությունը, ուստի և օտար լեզվի դասավանդման ընթացքում կարելի է սովորողի մոտ զարգացնել մի շարք այլ լրացուցիչ կարողություններ: Սակայն, ինչպես գիտենք, ուսումնական գործընթացի արդյունավետությունը կախված չէ միայն շահառու մեկ կողմից: Միայն սովորողի կամ բացառապես ուսուցչի ջանքերով հնարավոր չէ հաջողել: Այս համատեքստում կարևոր կլինի ասել, որ դասավանդման մի շարք հնարների, զանազան գործիքների կիրառումը ուսուցչին թույլ են տալիս կառավարելի դարձնել դասարանը: Եթե դասը հետաքրքիր է, ակտիվ , ապա սովորողը հաճույքով է մասնակցում դասին:

Օտար լեզուները ընդլայնում են սովորողի աշխարհայացքը, նպաստում է հաղորդակցման և հանրամշակույթային կարողությունների ձևավորմանը, լեզվական նորմերի ընկալմանը և գիտակցմանը, ինչպես նաև աջակցում են սովորողների ընդհանուր խոսքային կարողությունների զարգացմանը: Այս ամենը նպաստում է դպրոցականների լեզվաբանական կրթության

հիմունքների ձեւավորմանը: Օտար լեզվի տիրապետումը նպաստում է նաև աշխարհագրությունից, պատմությունից, գրականությունից սովորողների կոնկրետ պատկերացումների հարստացմանը: Օտար լեզվով շփումը կարգավորում է անհատի վարքը, խթանում այս կամ այն խոսքային գործունեությունը, համագործակցությունը: Այն նպաստում է անձնավորության արժեքային կողմնորոշիչների, հայացքների և համոզմունքների ձևավորմանը, ծառայում է սովորողի վարքի և փոխհարաբերությունների, խոսքային կարողությունների զարգացմանը, ինչը դրսևորում է խոսքային էթիկայի նորմերի պահպանման միջոցով[1]:

Ինչպես նշեցինք համագործակցային ուսուցումը ամենաարդիականն է, քանի որ այն հնարավորություն է տալիս, որ սովորողները փոխգործակցեն, միասին գտնեն այս կամ այն խնդրի լուծումը: Խիստ կարևոր է իրարից տարբերել ավանդական խմբային աշխատանքը և համագործակցային ուսուցումը: Ուսուցիչներից շատերն են դասավանդման ընթացքում կիրառում խմբային աշխատանքը, սակայն քչերն ունեն ուսուցման գործընթացում համագործակցային ուսուցման հիմնական տարրերն ու մեթոդները ինտեգրելու համար անհրաժեշտ վարպետություն: Հենց այդ պատճառով, համագործակցային ուսուցումը քիչ է կիրառվում դասարանում, և դպրոցում կիրառվող փոքր խմբերով աշխատանքներն ավելի շատ խմբային աշխատանքներ են, քան համագործակցային ուսուցում: «Ուսուցումը համագործակցային կլինի այն դեպքում, երբ աշակերտները միասին, զույգերով կամ փոքր խմբերով աշխատում են մի ընդհանուր խնդիր լուծելու, մի ընդհանուր թեմա հետազոտելու կամ նոր միտք, նորարարություն իրականացնելու համար»[2]: Ուսուցման համագործակցային մոտեցումները սովորողների առաջ բացում են ստեղծագործականության զարգացման, ինքնուրույն գործելու և տրամաբանելու լայն հնարավորություններ: Այս կերպ դասի փուլերը հստակ տարանջատվում են, լրացնում միմյանց, ինչն իր հերթին նպաստում է, որ դասարանը չկորցնի ակտիվությունը:

Համագործակցային ուսուցման տարրերի կիրառումը նպաստում է դասարանում նոր՝ համագործակցային միջավայրի ձևավորմանը, օգնում է ուսուցչին հասկանալու էությունն ու պլանավորելու դասը, պայմաններ է ստեղծում ուսուցման արդյունավետության գնահատման և արժևորման համար: «Ուրիշների հետ աշխատելու և համագործակցային ստեղծագործական աշխատանքից առավելագույնս օգուտ քաղելու էական պայմաններից մեկն ուրիշի տեղում իրեն

[1] Գիտամեթոդական հանդես, Օտար լեզուները Հայաստանում, էջ 9:
[2] Ս. Խաչատրյան, « Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառումը», Գյումրի, 2006, 18 էջ:

պատկերացնելու կարողությունն է, քանի որ դիմացինի տեսակետի ըմբռնումն աշակերտներին հնարավորություն է տալիս ավելի հեշտությամբ հարմարվելու կյանքի պահանջներին»[3]:

Անգլերենի դասին շատ կարևոր է նոր նյութի հաղորդումը: Նոր նյութի բացատրության ժամանակ պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ աշակերտը միանգամից չի կարող շատ բան սովորել: Հետևաբար՝ նոր նյութը բացատրելիս ուսուցիչը պետք է ուշադիր լինի, որպեսզի չգերազանցի այդ ծավալը: Ծավալը գերազանցելու դեպքում աշակերտի աշխատանքային հիշողությունը չի կարողանում հասկանալ նոր նյութը: Այդ առումով նոր նյութ բացատրելիս շատ կարևոր է այն փոքր կտորներով բացատրելը: Նյութը ներկայացնելուց հետո անհրաժեշտ է կանգ առնել, հարցերի միջոցով պարզել՝ արդյո՞ք հասկանում են երեխաները նոր ներկայացված նյութը, ապա գտնել իրավիճակային լուծումներ:

Անգլերենի դասավանդման ընթացքում ինքնուրույն խոսքի ձևավորմանը, ստեղծագործական ունակությունների զարգացմանը խթանող համագործակցային հնար է «Կենտրոններով աշխատանքը»: Ուսուցիչը Ստեղծվում են 4-5 հոգուց բաղկացած խմբեր: Խմբերը ստանում են տեքստը և մոտենում համապատասխան անվանումներով կենտրոններին: Խմբերում մասնակիցների ներգրավումը և խմբին համապատասխան կենտրոն ուղղորդելը կարող է լինել ինչպես նպատակային՝ համագործակցություն, որոշակի աշխատանքներում կարողությունների և հմտությունների խորացում, այնպես էլ պատահականության սկզբունքով:

Նախօրոք ընտրված կենտրոններն են՝

- Հետազոտողների կենտրոն
- Ստեղծագործողների կենտրոն
- Գրավոր աշխատանքի կենտրոն
- Բացահայտողների կենտրոն

Ուսուցիչը կարող է իր հայեցողությամբ ավելացնել կամ պակասեցնել կենտրոնների թիվը՝ փոխելով կամ հարմարեցնելով անունները:

Բացահայտողների կենտրոնում աշխատողները ընթերցում են տեքստը, կատարում նշումներ, վեր հանում վերջինիս հիմնական միտքը, ենթատեքստը և ներկայացնում ընկերներին:

3 Գ. Հովհաննիսյան, Ա. Զոհրաբյան , Ա. Արնաուդյան, Ք. Գրիգորյան, Մ. Դավթյան, Ի Օհանովա, «Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները», Երևան, 2004, էջ 145:

Հետազոտողների կենտրոնում ընդգրկված սովորողները ընթերցում են տեքստը և օգտվելով այդ պահին ձեռքի տակ եղած այլ աղբյուրներից՝ համացանց, գրականություն, փորձում են լրացուցիչ հետաքրքիր նյութեր հայթայթել տեքստի վերաբերյալ: Ստեղծագործողների կենտրոնի մասնակիցները, տեքստի առանձնահատկություններից ելնելով, փորձում են այն որևէ կերպ վերարտադրել և ներկայացնել, օրինակ՝ բեմականացում, պաստառի պատրաստում, նկարազարդում, երգ, պար և այլն, իսկ ահա գրավոր աշխատանքի կենտրոնում ընդգրկված սովորողները ընթերցում են տեքստը և իրականացնում լեզվական կամ բառային աշխատանք՝ պահանջին համապատասխան: Նշենք , որ աշխատանքի իրականացման ժամանակ սովորողները հաղորդակցվում են բացառապես անգլերեն լեզվով: Վերջում յուրաքանչյուր կենտրոնն ամփոփում է իր կատարած աշխատանքն ու գնահատվում:

Ստացվեց, որ գիտելիքի յուրացմանը զուգահեռ այս հնարի կիրառումը սովորողի մեջ զարգացրեց մի շարք նոր հմտություններ, կարողություններ ու որակներ, որոնցից են՝

- թիմում աշխատելու կարողություն;
- անգլերենով հաղորդակցվելու հմտություն;
- թիմային աշխատանքում պատասխանատու լինելու գիտակցում;
- ինքնուրույնություն;
- նախաձեռնողականություն;
- անսպասելի իրավիճակում կողմնորոշվելու կարողություն;
- համացանցային հարթակում կողմնորոշվելու, համապատասխան տեղեկատվությունը համակարգելու կարողություն;
- փոխգործակցելու կարողություն;
- աշխատանքին ստեղծագործաբար մոտենալու հմտություն:

Որպեսզի կիրառվող մեթոդական շղթան տա դրական արդյունք, հարկավոր է կառավարելի դարձնել սովորողի ուշադրությունը, ամեն կերպ բերել վերջինիս դեպի դասը: Հայտնի է, որ տեսողությունը համարվում է հիմնական զգայարաններից մեկը, որը մարդուն տալիս է շրջապատող աշխարհի մասին տեղեկատվության 90%-ը, և իհարկե տեսողական համակարգը համարվում է ամենաբարդը մյուս զգայարանների համեմատ: Նախ, տեսողական օրգանը ոչ միայն վերարտադրում է առարկան, այն միաժամանակ հաղորդում է բազմաթիվ առնչվող տվյալներ, օրինակ՝ չափը, գույնը, գտնվելու վայրը, հեռավորությունը, սա հենց գործընթացի

գործողությունն է: Այնուհետեւ բոլոր տվյալները աղավաղումներով ու սխալներով փոխանցվում են ուղեղին, որոնք ուղեղն ուղղում կամ լրացնում է արդեն հասանելի տեղեկատվության օգնությամբ[4]: Հաշվի առնելով վերը նշված պնդումը՝ բավականին կարևոր ենք համարում անգլերենի դասավանդման ընթացքում զննական մեթոդների կիրառումը ևս, ինչը կարող է գիտելիքը դարձնել ավելի առարկայական ու տեսանելի: Այս համատեքստում կարելի է օգտագործել զանազան պարագաներ, դիդակտիկ նյութեր, զանազան նկարներ, անիմացիաներ, որոնց շուրջ սովորողները կարող են նկարագրական ու վերլուծական տեքստեր գրել, ինչն էլ կնպաստի խոսքային կարողության զարգացմանը: Այսպիսով, ակտիվացնելով սովորողների տեսաղական զգայարանը՝ ուսուցիչն ամբողջապես կենտրոնացնում է աշակերտի ուշադրությունը, նախապատրաստում վերջինիս դասին: Ուսուցիչը, անգլերենի ուսուցման շրջանակներում, շատ հաճախ կարող է ստեղծել միջառարկայական կապեր՝ թույլ տալով սովորողին խոսել իր հետաքրքրությունների մասին:

Ինչպես արդեն նշել էինք, կրթության մատչելիությունն ու հասանելիությունը հասարակության զարգացման ու առաջընթացի հիմնական անկյունաքարերից են, ուստի նորագույն տեխնոլոգիաներով հեղեղված այս ժամանակաշրջանում մանկավարժի գործառույթներից է նաև սովորողին դեպի կրթություն շահագրգռելը, մոտիվացնելը, խոսուն ու գործնական օրինակներով կրթության դերն ու նշանակությունը կարևորելը, վերջինիս մոտ ինքնուրույնության, նախաձեռնողական ու ստեղծագործական ունակությունների ձևավորելը: Հենց այդ նպատակներից է բխում ուսուցչի կողմից նորագույն մեթոդներին, զանազան տեխնոլոգիական նորարարություններին դիմելն ու տարրբեր տիպի ու նշանակության դասեր իրականացնելը: «Մանկավարժական աշխատողը պարտավոր է ապահովել հանրակրթության պետական չափորոշիչով նախատեսված ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնի յուրացումը սովորողների կողմից՝ կիրառելով դասավանդման առավել արդյունավետ մեթոդներ և ժամանակակից տեխնոլոգիաներ[5]: Այսպիսով, անգլերենի դասավանդման ընթացքում ընդհանուր զարգացման և մտավոր դաստիարակության խնդիրների համակարգում առանձնանանում է խոսքային կաորղության և հաղորդակցական հմտությունների զարգացումը, որի համար նպաստավոր պայմաններ է ստեղծում համագործակցային ուսուցումը: Համագործակցային մեթոդների կիրառությունը թույլ է տալիս, որ սովորողները անընդհատ լինեն

[4] https://coppershop.ru/hy/mama/5-osnovnyh-chuvstv-cheloveka-kakie-organy-chuvstv-cheloveka-i-ih-funkcii.html / հոգեբանական պորտալ/

[5] https://www.arlis.am/documentview.aspx?docid=71908 «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 27, կետ 4:

համագործակցության մեջ, երկխոսեն, քննարկեն ուսուցանվող նյութը, միասին գտնեն հարցերի պատասխաններն ու գործնական կիրառության մեջ դնեն իրենց տեսական գիտելիքները: Երկխոսությունը հանդիսանում է հաղորդակցության հիմնական ձև: Կարևոր է սովորողին սովորեցնել լսել և հասկանալ դիմացինի խոսքը, միտքը, ձևակերպել իր միտքը, երկխոսությունը առաջ տանել, հարցեր տալ և պատասխանել՝ օգտվելով լեզվական տարբեր միջոցներից: Այն մեծ նշանակություն ունի սովորողների անձի ձևավորման համար, քանզի վերջիններս աշխարհին ծանոթանում են իրեն հետաքրքրող հարցերից ստացած պատասխանների հիման վրա: Հենց այդ պատասխանները հետաքրքիր կերպով հանդիսանում են նոր բառեր սովորելու աղբյուր: Հնչում է հարցը, սովորողը ստանում է սպառիչ պատասխան՝ արդյունքում իր բառային պաշարն ավելացնելով նոր հասկացությունների, երևույթների անվանումներով: Փաստորեն, երկխոսությունը կարելի է դիտարկել որպես օտար լեզվի բառային պաշարի հարստացման սկզբնաղբյուր: Պակաս կարևոր չէ այն, որ երկխոսական խոսքը աստիճանաբար զարգացնում է ինքնուրույն խոսքը՝ մենախոսություն: Մենախոսությունը ծնվում է երկխոսության խորքերում: Մենախոսական խոսքի զարգացումը ներառում է լսողական հմտությունների ձևավորում, վերապատմելու, անկախ խոսք կառուցելու կարողությունների ձևավորում[6]:

Համագործակցային ուսուցումը ենթադրում է շարժուն ու համագործակցային դասերի իրականացում, որտեղ սովորողը չի սպասում, որ ուսուցիչն իրեն դաս բացատրի: Այս պարագայում նույնիսկ նոր նյութի հաղորդման ժամանակ ակնկալվում է սովորողի ուղիղ մասնակցությունը: Սովորողն ու ուսուցիչը համագործակցում են, որևէ համագործակցային մեթոդով սովորում նոր դասի կարևոր հասկացությունները, կանոնների հիման վրա բերում են օրինակներ, զանազան աղյուսակների ու դիագրամների օգնությամբ մատնանշում նմանություններն ու տարբերությունները: Ուսուցման այս ձևը նպաստում է սովորողների մտածողության զարգացմանը, սեփական կարծիք հայտնելուն, ընտրություն կատարելու հմտությունների զարգացմանը, ճանաչողական կարողությունների ձևավորմանը: Համագործակցային մեթոդները զույգերով և փոքր խմբերով մտավոր աշխատանքի եղանակներն են, որոնց նպատակն է համատեղ որոնումներ կատարել, ընդհանուր նպատակի համար որոշումների կայացնել ու իրագործել:

[6] В. И. Яшина, М. М. Алексеева,«Теориа и методика развития речи детей», էջ 37:

Համագործակցային ուսուցման սկզբունքներն են.

- փոխուսուցումը, համագործակցություն,
- ակտիվությունը,
- կարծիքի, դիրքորոշման, ցանկության անկաշկանդ արտահայտում,
- դասին սովորողների համաչափ մասնակցություն:

Այսպսով, կարծում ենք, որ սովորողների կապակցված խոսքը, պատկերավոր մտածողությունը, ստեղծագործականությունն ու թիմում աշխատելու կարողությունը խթանելու, դասին սովորողի դերը ակտիվացնելու համար նպատակահարմար է դիմել ուսուցման համագործակցային եղանակին: Այս կերպ ուսուցիչը հեշտությամբ կարող է բավարարել բոլոր սովորողների կրթական կարիքները, ապահովել դասին վերջիններիս համաչափ մասնակցությունը: Մասնավորապես անգլերենի դասավանդման ընթացքում մեթդը կարող է տալ դրական արդյունքներ: Մեր մանկավարժական գործունեությանը հղում անելով՝ նշենք, որ ունենում ենք ուսուցման սույն եղանակի կիրառման դժվարություններ՝ պայմանավորված սովորողների քիչ թվով, այդուհանդերձ ժամանակ առ ժամանակ գտնում ենք եղանակներ, որպեսզիմեր սովորողները ևս սովորեն համագործակցել՝ այդպիսով ձևավորելով վերջիններիս սովորել սովորելու կարողունակությունը:

1.2 Դասավանդման մեր փորձից

Մեր մանկավարժական գործունեության ընթացքում բազմիցս անդրադառնալ ենք դասավանդման համագործակցային մի շարք մեթոդների, որոնց օգնությամբ նպատակ ենք ունեցել խթանել սովորողների խոսքային կարողությունը, պատկերավոր ու ստեղծագործական մտածողությունը, ինքնուրույնությունն, համագործակցային կարողությունները: Նմանօրինակ մեթոդներից են «Խճանկար», «Շրջագայություն պատկերասրահում», «Երեք բանալի և մեկ կողպեք», «Հինգրոպեանոց ազատ շարադրանք» և այլն:

Իրականացրել ենք խոսքային կարողությունը զարգացող տարբեր առաջադրանքներ: Օրինակ՝ սովորողներին հանձնարարել ենք խմբեր կազմել և տրված գոյականներով պատմություն հորինել, կամ տրված տեքստից երկսյուն աղյուսակում դուրս գրել եզակի ու հոգնակի գոյականները, գտնել դրանց տրվող հարցերը: Նմանօրինակ հանձնարարությունների օգնությամբ սովորողները գործնականում կիրառեցին իրենց բառային պաշարն, ինչպես նաև ձեռք բերեցին երկխոսելու հմտություններ: Այստեղ շեշտը դրել էինք սովորողների համատեղ գործունեության վրա, որի ընթացքում նրանք հնարավորություն ունեցան համագործակցել, օգնել միմյանց: Բերենք մի քանի օրինակներ, որոնց միջոցով կցանկանանք հիմնավորել մեր պնդումներն առ այն, որ դասավանդման համագործակցային մոտեցումները մեծապես նպաստում են սովորողների աշխատունակության, սովորելու մոտիվացիայի բարձրացմանը:

Առաջադրանքների օրինակներ՝

1. **Make up a story with the given nouns. / water, land, homeland, soldier, peace/**
2. **Form the plural of the given nouns.**

Singular	Plural
bus	
wish	
box	

Բավականին հետաքրքիր համագործակցային աշխատանք է նաև հանձնարարել զույգեր կազմել և նկարել դասավանդվող պատմության հերոսին, ինչի ընթացքում սովորողները կարող են միմյանց հարցնել իրենց աշխատանքների մասին, քննարկեն գույների, պատկերների

ընտրությունները, կիսվեն իրենց նախասիրություններով, մեկնաբանեն հերոսի բնավորության գծերը: Սովորողների միջև հաստատվում է փոխադարձ կապ, տեղի է ունենում կարծիքների, մտքերի փոխանակում: Նմանօրինակ աշխատանք իրականացրել ենք 6-րդ դասարանում Robin Hood թեմայի ուսումնասիրության շրջանակներում:

Առաջադրանքի օրինակ



Հաճախակի կիրառում ենք նաև ՏՀՏ գործիքներ, որոնց օգնությամբ խմբերը կատարում են առաջադրանքը, հաջորդիվ մեկնաբանում, բացատրում կիրառված քերականական կանոնները:Նմանօրինակ դաս անցկացրել ենք 6-րդ դասարանում «Travelling»

թեմայից: Սովորողները դիտել են տեսասահիկն, ապա բաժանվել խմբերի ու պատասխանել հարցերին:

1. **Սիրու՞մ եք ճամփորդել:**
2. **Ո՞ւմ հետ եք սիրում ճանապարհորդել:**
3. **Տարվա ո՞ր եղանակին եք նախընտրում ճանապարհորդել:**
4. **Ե՞րբ եք վերջին անգամ ճանապարհորդել, ո՞ւր գնացիր, ի՞նչ տեսաք այնտեղ:**

Ներկայացնենք համագործակցային մեթոդների կիրառմամբ մեկ այլ աշխատանքի օրինակ:
7-րդ դասարանում «Clhotes, fashion» թեմայի ուսուցման շրջանակներում կիրառել ենք զննական մեթոդ՝ սովորողներին տալով հագուստների նկարներ, որոնց մասին վերջիններս պետք է գրեին նկարագրական տեքստ: Այսպես, աշխատանքն իրականացրեցինք զույգերով: Յուրաքանչյուր զույգի տրվեց երկու նկար և 5 րոպե ժամանակ: Արդյունքում՝ սովորողները իմացան հագուստների անվանումներն ու բառերը կիրառեցին նախադասության մեջ: Աշխատանքը բավականին նպաստավոր էր բառային պաշարի հարստացման տեսանկյունից:
Առաջադրանքի օրինակ՝

Աշխատանքի ավարտին սովորողները լրացրեցին ԳՈՒՍ աղյուսակը:

- **ԳԻՏԵԻ**
- **ՈՒԶՈՒՄ ԷԻ ԻՄԱՆԱԼ**
- **ՍՈՎՈՐԵՑԻ**

Համագործակցային աշխատանքների ավարտին կունենանք հետևյալ վերջնարդյունքները՝

- Սովորողները ուսուցանվող նյութը կուսումնասիրեն ինքնուրույն, կսովորեն միմյանց օգնելով աշխատել, նրանց մոտ կձևավորվի կոլեկտիվ մտածողություն:
- Սովորողները իրենց սովորածը կսովորեցնեն միմյանց, կամբողջացնեն գիտելիքները միասին:

Այսպիսով, հիմնվելով մեր մանկավարժական փորձի վրա՝ կարող ենք պնդել, որ համագործակցային ուսուցումը անգլերենի դասին կարող է օգնել սովորողների մոտ մի շարք առանցքային կոմպետենցիաների ձեվավորմանը, որոնց թվում են՝ լեզվական սովորել սովորելու, ժողովրդավարական, մեդիա, սոցիալական և այլն: Ուսուցչի համար անչափ կարևոր է, որ մեթոդական աշխատանքը (ուսուցման բովանդակությունն ու ձևերը) կատարվի տրամաբանորեն հիմնավորված, և նյութի մատուցման ձևը համապատասխանի բովանդակությանը: Լեզու դասավանդողի կարևորագույն խնդիրներից են՝ ապահովել ուսուցման որակական նոր մակարդակ և գործնական ուղղվածություն, բարձրացնել յուրաքանչյուր դասի արդյունավետությունը: Անչափ կարևոր է նաև դասավանդման գործընթացում հավի նառնել յուրաքանչյուր սովորողի անհատական պահանջմունքները, նրա օժտվածությունն ու դրա բացակայությունը: Ուսուցչի մանկավարժական գործունեության սկզբունքներից է սովորողի ուսուցման, դաստիարակության եւ զարգացման նկատմամբ անհատական նպատակաուղղված մոտեցումը[7]: Այդ տեսանկյունից կարևորում եմ առարկայական մեթոդմիավորման աշխատանքը, որը կոչված է կատարելագործելու դասավանդման որակը՝ ապահովելու նոր մեթոդական ձևեր ու միջոցներ, ուսուցիչների մասնագիտական մակարդակի բարձրացման համար ստեղծել պայմաններ, օգտագործել անգլերեն լեզվի դասերը սովորողների արժեքային համակարգի ձևավորման համար և այլն:

Լիահույս ենք, որ սույն հետազոտության արդյունքում ձեռք բերված գիտելիքները կծառայեն իրենց նպատակին և կօգնեն մեզ մեր հետագա մանկավարժական գործունեության ընթացքում:

[7] http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=2336&Reading=0 ՀՀ օրենքը ուսուցչի կարգավիճակի մասին, հոդված 4, կետ «ա»:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Սույն աշխատանքի վերլուծության արդյունքում կատարեցինք մի քանի արձանագրումներ, որոնք կամբողջացնենք, ընդհանրական տեսքի կբերենք ստորև:

Աշխատության թեման անսպառ ուսումնասիրության և վերլուծության երկարատև աշխատանք է պահանջում, այնուամենայնիվ մի բան հստակ է, եթե անգլերենի դասավանդման ընթացքում ուսուցիչը հիմնական գիտելիքների հաղորդմանը զուգահեռ նպատակ է դնում զարգացնել սովորողի պատկերավոր մտածողությունը, ինքնուրույն գործելու ու նախաձեռնողական քայլեր կատարելու կարողությունը, գործնական հմտությունները, թիմում աշխատելու կարողությունը, ապա անհրաժեշտ է հաշվի առնել նաև, որ որոշակի կոնկրետ գոտում աշակերտն ունի իր հետաքրքրությունները, առանձնահատկությունները: Այս համատեքստում կրկին կցանկանանք շեշտադրել համագործակցային ուսուցման կարևորությունը: Սովորողի հետ հաշվի նստել, լսել նրա կարծիքը, խրախուսել վերջինիս, ստուգման ընթացքում շեշտադրել ոչ թե սխալ, այլ ճիշտ բաղադրիչը, կարծում ենք, որ նման մոտեցումը սովորողին ու դասարանը կդարձնեն հեշտ կառավարելի, և ուսուցիչն անպատճառ կհասնի հաջողության: Իսկ ահա ստեղծագործական ունակությունների զարգացումն անմիջական գործընթաց է, որը զուգահեռվում է հիմնական գիտելիքների հաղորդմանը, ուստի ուսուցիչը պետք է շփման համար ստեղծի հարմարավետ պայմաններ, որպեսզի ամեն կերպ խրախուսվի անհատի գիտակցումը, ինքնուրույնության կարևորությունը սովորողի մոտ: Անշուշտ, այս ամենից հետո կարելի է վստահաբար նշել, որ գործ կունենանք նախաձեռնող, մտածող, ստեղծագործող և ինքնուրույն դատող անհատի հետ:

Կարևորագույն բաղադրիչ է նաև բարոյահոգեբանական կայուն մթնոլորտը, ինչը թույլ կտա, որ սովորողը հնարավորինս արագ ինտեգրվի հասարակություն ու նախաձեռնողի դերում լինի, ցանկանա սովորել ու իր սովորածը կիրառել ուսումնական հաստատությունից դուրս,

համագործակցի դասընկերների հետ: Այս հարցում պակաս կարևոր չէ սոցիալական միջավայրի՝ այս պարագայում դասարանի ընդհանրական դերը:

Կցանկանայինք վերահաստատել նաև ուսուցչի աշխատանքի ընթացքում վերջինիս ընտրած մեթոդական եղանակների ու առհասարակ դասի տեսակների կարևոր նշանակությունը: Զանազան մեթոդների կիրառությունը, ակտիվ, գործուն դասերի, խմբային ու գործնական աշխատանքների իրականացումը, միջառարկայական կապերի ստեղծումը, միակ արդյունավետ եղանակներն են հաջողության հասնելու համար:

«Աշակերտին սովորեցրու աշխատել, նրան ստիպիր ոչ միայն սիրել աշխատանքը, այլև այնքան նրան հարազատանալ, որպեսզի այն դառնա նրա երկրորդ բնավորությունը, սովորեցրու նրան այն բանին, որ նրա համար աներևակայելի լինի այլ կերպ, քան սեփական ուժերով որևէ բան յուրացնելը, որ նա ինքնուրույնաբար մտածի, որոնի, իրեն դրսևորի, զարգացնի իր ննջող ուժերը, իրենից մշակի անսասան մարդու»:

Ադոլֆ Դիստերվեգ

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գիտամեթոդական հանդես, «Օտար լեզուները Հայաստանում»:
2. Ս. Խաչատրյան, « Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառումը», Գյումրի, 2006:
3. Գ. Հովհաննիսյան, Ա. Զոհրաբյան , Ա. Արնաուդյան, Ք. Գրիգորյան, Մ. Դավթյան, Ի Օհանովա, «Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները», Երևան, 2004:
4. https://coppershop.ru/hy/mama/5-osnovnyh-chuvstv-cheloveka-kakie-organy-chuvstv-cheloveka-i-ih-funkcii.html / հոգեբանական պորտալ/
5. https://www.arlis.am/documentview.aspx?docid=71908 «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք:
6. http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=2336&Reading=0 ՀՀ օրենքը ուսուցչի կարգավիճակի մասին, հոդված 4, կետ «ա»:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ԴԱՍ ԱՆԳԼԵՐԵՆԻՑ

Դասարան՝ 10-րդ

Թեմա՝ «Անցյալ անորոշ և ներկա վաղակատար ժամանակաձևերի նմանություններն ու տարբերությունները»

Դասը պլանավորված է՝ համաձայն կարողունակությունների ձևավորմանն ուղղված դասի դիդակտիկ փուլերի հաջորդականության՝

1. **Աշխուժացնել**
2. **Մեկնարկել, ակտիվացնել, քաջալերել**
3. **Կողմնորոշել դեպի նպատակ, ուղղորդել**
4. **Մշակել**
5. **Ամրապնդել, ներկայացնել, ապահովել**
6. **Կիրառել, փոխանցել**
7. **Ամփոփել, ուրվագծել հեռանկար**

Դասի փուլերը և ընթացքը

1. **Աշխուժացնել**

Ուսուցիչը, կիրառելով **«Խաթարված հերթականություն»** մեթոդը, առաջարկում է սովորողներին տառեր ասել: Տառերը տեղադրելով վանդակների մեջ՝ սովորողները գտնում են դասի վերնագիրը: Հաջորդիվ դասարանը բաժանվում է երկու խմբի, և ուսուցիչը հանձնարարում է առաջադրանքները:

Առաջին խումբ՝ անցյալ անորոշ /Past Simple/ ժամանակաձև

Երկրորդ խումբ՝ ներկա վաղակատար /Present Simple/ ժամանակաձև

Սովորողները պատրաստում են ցուցապաստառ՝ մեջբերելով սահմանումներն ու դրանց հիմն վրա օրինակներ ավելացնում:

2. **Մեկնարկել, ակտիվացնել, քաջալերել**

Սովորողները սկսում են աշխատանքային գործընթացը: Ուսուցիչը մոտենում է խմբերին և հարկ եղած դեպքում ուղղորդում է նրանց: Ուսուցիչը քաջալերում է սովորողներին, խրախուսում աշխատանքի ընթացքում նրանց ցուցաբերած ստեղծագործականությունը:

3. **Կողմնորոշել դեպի նպատակ, ուղղորդել**

Սովորողներև ներկայացնում են իրենց աշխատանքները, մտքերը, մեկնաբանում են կատարած գրառումները, բացատրում սահմանումներն ու մեկնաբանում բերված օրինակները: Ուսուցիչը լսում է խմբերի քննարկումները ժամանակաձևերի շուրջ՝ թույլ տալով որպեսզի սովորողները քննարկեն, ուղղեն միմյանց սխալները<եթե այդպիսիք առկա են:

4. **Մշակել**

Դասի այս հատվածում կիրառվում է Վիննի դիագրամը, որի օգնությամբ անդրադարձ է կատարում թեմային: Սովորողները հնարավորություն են ունենում տրամաբանել, վերլուծել, դասդասել, տարբերակել, գտնել ընդհանրությունններ ու տարբերություններ ժամանակաձևերի միջև:

5. **Ամրապնդել, ներկայացնել, ապահովել**

Ուսուցիչը ՏՀՏ գործիքների միջոցով առաջարկում է առաջադրանք, որն աշակերտները պետք է կատարեն զույգերով, մեկնաբանեն և բացատրեն կիրառված քերականական կանոնները:

6. **Կիրառել, փոխանցել**

Սովորողներին տրվում է առաջադրանք, որտեղ պետք է ավելացնեն համապատասխան ժամանակաձևերը: Աշխատանքը ինքնուրույն է, սակայն սովորողները կատարում են փոխադարձ ստուգում:

7. **Ամփոփել, ուրվագծել հեռանկար**

Դասն ավարտվում է դերային խաղով /Լրագրող- Աշակերտ/: Զույգերն ընտրվում են պատահականության սկզբունքով: Դասի ավարտին սովորողներին տրվում է հայտորոշիչ թեստային առաջադրանք:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ԴԱՍ ԱՆԳԼԵՐԵՆԻՑ

Դասարան՝ 10-րդ

Թեմա՝ «My meals»

Դասի տիպը՝ ամփոփման դաս

Դասի կահավորանքը՝ Համացանցին միացված համակարգիչներ

Դասի նպատակը՝

- Նպաստել սովորողների խոսքային կարողության, հաղորդակցական հմտությունների զարգացմանը:
- Ձևավորել երկխոսելու, սեփական կարծիքն արտահայտելու կարողություն, խթանել բառային պաշարի հարստացմանը:
- Ուսումնական նյութի օգնությամբ նպաստել, որ սովորողը ինքնուրույն ձևակերպի քննարկվող թեմայի վերաբերյալ մտքեր, կարծիք, դիրքորոշում:
- Կարողանալ գործածել տարատեսակ սննդամթերքների և ճաշատեսակների անվանումները նախադասություններ կազմելիս:

ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ

Սովորողները մտագրոհի միջոցով գրատախտակին գրում են սննդամթերքի, աղցանների, նախուտեստների անվանումներ, որոնք, ըստ իրենց, առողջարար են: Հաջորդիվ ուսուցիչը խմբային քննարկումների միջոցով պարզում է սննդի հետ կապված սովորողների նախասիրությունները՝ հնարավորություն տալով, որ սովորողները միմյանց հղեն հարցեր: Սովորողներին դասին նախապատրաստելուց հետո ուսուցիչը դասարանը բաժանում է 4 խմբի՝ յուրաքանչյուր խմբի տալով տեքստային աշխատանք: Վերջիններս տեքստից սյունակներում դուրս են գրում բուսական ու կենդանական ծագման սննդամթերքների անվանումները, դրանցով

կազմում նախադասություններ: Աշխատանքը ներկայացնում է յուրաքանչյուր խմբից ընտրված զեկուցողը: Խմբերն աշխատանքի համար իրականացնում են փոխադարձ գնահատում:

Հաջորդիվ ուսուցիչի թույտվությամբ սովորողները մուտք են գործում համացանց: Աշխատանքի պահանջը հետևյալն է՝ համացանցից գտեք Ձեր նախընտրելի ճաշատեսակի բաղադրատոմսը: Աշխատանքն իրականացվում է խմբային եղանակով: Հաջորդիվ խմբերը ներկայացնում են աշխատանքներն ու գրատախտակին գրում նոր կամ անհասկանալի բառերը:

Դասի ամփոփման հատվածում հանձնարարվում է աշխատանք զույգերով: Սովորողները պետք է գրեն առավելագույն շատ սննդամթերքի անվանումներ: Ամենաշատ բառ ունեցող զույգը ստանում է միավորներ և գնահատվում:

Դասի ավարտին լրացվում է ինքնագնահատման ռուբրիկ:

Ակտիվ մասնակեցի՞ր խմբային աշխատանքներին:	ԱՅՈ	ՈՉ
Արդյոք ունեցա՞ր դժվարություններ:	ԱՅՈ	ՈՉ
Օգնեցի՞ր դասընկերներիդ:	ԱՅՈ	ՈՉ
Խմբում աշխատելիս «գլուխ պահեցի՞ր»:	ԱՅՈ	ՈՉ